ՀՀ Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների կողմից շրջանառության մեջ դրված «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 12.06.2026թ. օրենքի նախագծի վերաբերյալ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծով առաջարկվում է Ազգային ժողովի ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունք տալ միայն այն քաղաքացիներին, որոնք տվյալ տարվա ընթացքում առնվազն վեց ամիս բնակվել են Հայաստանում:

Այս նախագիծը սահմանադրաիրավական նախաձեռնություն է, քանի որ վերաբերում է **ընտրական իրավունքի սահմանափակմանը**:

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Իսկ 4-րդ մասի համաձայն՝ Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Այսպիսով, Սահմանադրությամբ ամրագրված է ընտրական իրավունքի իրացման նախադրյալներն ու դրա սահմանափակման բացառիկ, սպառիչ հիմքերը՝ չնախատեսելով օրենսդրական մակարդակով լրացուցիչ պայմանների սահմանման հնարավորություն: Հետևաբար, կեցության նոր ցենզի ներդրումը գործող Սահմանադրության համատեքստում անխուսափելիորեն հանգեցնելու է Սահմանադրությամբ երաշխավորված ընտրական իրավունքի լրացուցիչ սահմանափակման, որը չի բխում Սահմանադրության 48-րդ հոդվածի կարգավորումներից:

Եթե Սահմանադրության համապատասխան հոդվածը սահմանում է, որ ՀՀ քաղաքացիներն ունեն ընտրելու իրավունք, և այնտեղ **բնակության ցենզ** նախատեսված չէ, ապա օրենքով նոր սահմանափակում ավելացնելը հակասում է Սահմանադրությանը:

Նախագծով նախատեսում է նախորդ 365 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում առնվազն 183 օր փաստացի գտնվելու պահանջ, ինչը չի կարող օբյեկտիվորեն և բավարար չափով արտացոլել պետության հետ քաղաքացու կայուն և շարունակական կապ ունենալը կամ չունենալը:

Նախագծով փորձում են ցույց տալ քաղաքացիների և պետության կապը, քանի որ քաղաքացիները ապրելով Հայաստանում, մասնակցում են երկրի սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքին և անիջականորեն իրենք են կրում իրենց վրա ընտրությունների հետևանքները:

Նախագծում չի բացատրվում, թե ինչու է ընտրվել հենց 6 ամիսը, այլ ոչ 3, 9 կամ 12 ամիսը, չկա որևէ ուսումնասիրության, վիճակագրության կամ միջազգային փորձի մեկնաբանություն:

Հետևապես այս նախաձեռնությունը ավելի շատ քաղաքական պահանջ է, չունի հստակ իրավական և փաստական հիմնավորում թե ինչու պետք է բնակության ցենզը 6 ամիս սահմանել:

ՀՀ սահմանադրությունը երեշխավորում է քաղաքացու ընտրական իրավունքը, որպես քաղաքական իրավունք: Այս դրույթը ժամանակավորապես սահմանափակում է Հայաստանի քաղաքացիների ընտրելու իրավունքը, հետևապես խախտվում է նաև ՀՀ սահմանադրությամբ ամրագրված դրույթը:

Բացի այդ նախագծով չի ներկայացվել հստակ մեխանիզմ, թե ինչպես պետք է կարգավորվի բնակրության ռեգիստրում քաղաքացիների բնակության վերաբերյալ տեղեկատվության ստացումը հաշվի առնելով անձնական տվյալների պաշտպանության հարցը:

Լինում են դեպքեր երբ քաղաքացին հաշվառված է Հայաստանում, բայց ապրում է այլ պետությունում, կամ ապրում է ՀՀ-ում, բայց հաշվառված է այլ պետությունում, կամ ապրում է ՀՀ-ում, բայց

հաշվառումը կատարվել է ավելի ուշ։ Նման դեպքերում բնակչության ռեգիստրը պետք է բավարար լինի նման ինֆորմացիան տրամադրելու համար, մինչդեռ այս պահին բնակչության ռեգիստրը նման ռեսուրսներ չունի։ Իսկ սա բավականին բարդ և անկայուն պրոցես է, որը կարող է անընդհատ փոփոխվել։ Բացի այդ պետք է նախատեսել նաև բողոքարկման ընթացակարգերը, որի դեպքում քաղաքացիները կարող են ներկայացնել իրենց բողոքները։

Վերոգրյալի հիման վրա, կարելի է ասել, որ նախագիծը չունի հիմնավոր հաշվարկներ (ինչու հենց 6 ամիս) և պահանջում է բազմաթիվ հարակից օրենքների և բնակչության ռեգիստրի համակարգային փոփոխություններ, որոնք բացակայում են փաստաթղթից։

Առաջարկություն

1. Մինչ նախագծի ընդունումը նպատակահարմար է գնահատել նախագծի համապատասխանությունը Սահմանադրությանը։
2. Անհրաժեշտ է նախագիծը դնել հանրային քննարկման՝ լայն հանրային և մասնագիտական կարծիքը ստանալու նպատակով, քանի որ այն վերաբերում է ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման պայմանների փոփոխությանը, հետագայում այն էական ազդեցություն է ունենալու արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքի (իրացման) վրա։
3. Հանրային քննարկումներին պետք է ներգրավել ընտրական իրավունքի մասնագետների, սահմանադրագետների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, սփյուռքի կառույցների, ինչպես նաև ընտրական գործընթացների միջազգային փորձ ունեցող կազմակերպությունների ներկայացուցիչների՝ նախագծի իրավական, գործնական և սոցիալական հետևանքները համակողմանի քննարկելու և գնահատելու նպատակով։
4. Ցանկալի կլիներ նաև այս նախագիծը ներկայացնել նաև Եվրոպայի Խորհրդի խորհրդատվական մարմնի՝ Վենետիկի հանձնաժողովի կարծիքին։
5. Նախագիծը պետք է հստակ պատասխանի հետևյալ հարցերին.

- ի՞նչ է համարվում բնակություն,
- ինչպե՞ս է այն հաշվարկվելու,
- ո՞ր մարմինն է այն հաստատելու,
- ի՞նչ ապացույցներ են ընդունվելու,
- ինչպե՞ս է վիճարկվելու այդ որոշումը։

6. Օրենքում նպատակահարմար է հստակ սահմանել այն դեպքերը, երբ անձը, չնայած արտերկրում գտնվելուն, չի կորցնում ընտրելու իրավունքը, օրինակ՝

- դիվանագիտական ծառայություն,
- զինվորական ծառայություն,
- պետական գործուղում,
- ուսում,
- բուժում,
- միջազգային կազմակերպություններում աշխատանք,
- հեռավար աշխատանք կամ ծառայություն մատուցող անձինք, ինչի արդյունքում վճարում է ՀՀ հարկեր,
- այլ օրենքով սահմանված հարգելի պատճառներ։

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ

Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի իրավաբան՝

Վիկտորիա Եղոյան